

ԵՎՐԱՍԻՆՏԵՐՈՒՄ

ՆՇԱՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՉ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՎԵՑ

Հուլիսի 18-ին Վրաստանի խորհրդարանը միաձայն վավերացրեց Եվրամիության հետ Վրաստանի ասոցիացման համաձայնագիրը: Հիշեցնենք, որ ասոցիացման համաձայնագիրը Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, Եվրոպայի խորհրդի նախագահ Ֆերանդո Ալոնկալեի և Եվրահամաժողովի նախագահ Խոսե Մանուել Բարոզոյի կողմից ստորագրվեց հուլիսի 27-ին Բրյուսելում:

Վրաստանի խորհրդարանի արտահերթ նստաշրջանի լիազույնար նիստում համաձայնագրի քննարկումներին նախորդել էին կոմիտեական լուսնները:

Երեկ, հուլիսի 18-ին, օրենսդիր մարմնի պատգամավորներին Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագիրը ներկայացրեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն:

Նրա հավաստմամբ, արդեն ընթացիկ տարվա սեպտեմբերից ուժի մեջ կմտնի ասոցիացման ժամանակավոր համաձայնագրի պայմանավորվածությունների շուրջ 80 տոկոսը: Մասնավորապես, մասնակիորեն կկիրարկվի ազատ առևտրի մասին պայմանավորվածությունը:

Քննարկմանը իր ելույթում Վրաստանի փոխվարչապետ, Էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրկվաշվիլին խոսեց Եվրամիության հետ համընդհանուր և խոստումնալից առևտրի նշանակության, այդ ուղղությամբ անցկացված և անցկացվելիք միջոցառումների մասին:

Ասոցիացման համաձայնագրի վավերացմանը նվիրված խորհրդարանական քննարկումներին ելույթ ունեցան օրենսդիր մարմնի մեծամասնության ու փոքրամասնության լիդերները, խմբակցությունների ղեկավարները, խորհրդարանական կոմիտեների ներկայացուցիչները:

Բոլոր ելույթներում միանշանակորեն ընդգծվում էր



Երկրի համար ասոցիացման համաձայնագրի վիճարկման նշանակությունը, դրա դրական, խթանիչ ազդեցությունը ինչպես վրաց էկոնոմիկայի զարգացման, այնպես էլ Վրաս-

տանի համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի հիմնախնդրի կարգավորման վրա, ինչպիսին է երկրի տարածքային ամբողջականության վերականգնումը:

Իր ելույթում Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին առանձնակի շեշտեց Եվրոպական համարության աջակցությամբ Վրաստանի առջև ծառայած հիմնախնդրների կարգավորման նշանակությունը:

Ասոցիացման համաձայնագրի վավերացմանը նվիրված խորհրդարանական քննարկմանը ասոցիացման կապակցությամբ Վրաստանի ժողովրդին շնորհավորեցին հյուրի կարգավիճակով խորհրդարան հրավիրված Եվրամիության ընդայնման և Եվրոպական հարևանության քաղաքականության հարցերով Եվրակոմիսար Շտեֆան Ֆյուլեն, Բուլղարիայի արտաքին գործերի նախարար Քրիստիան Վիգենինին, Լատվիայի արտաքին գործերի նախարար Էդգար Ռինկեյիչը, Ավստրիայի խորհրդարանի ազգային խորհրդի նախագահ Կառլ Հայնց Հոփմանը:

Համաձայնագրի վավերացման առթիվ ներկայանեցին և ողջ Վրաստանին շնորհավորեց և ողջունեց խորհրդարանի լիազույնար նիստին ներկա գտնվող Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

Այս խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի վավերացման հարցը դրեց քվեարկության: Օրենսդիրները, միահամուռ, 123 «կողմ», «0» դեմ ձայներով վավերացրին ասոցիացման համաձայնագիրը, ապա խորհրդարանի խոսնակ Դավիթ Ուսուփաշվիլին իր ստորագրությամբ հաստատեց երկրի օրենսդիր բարձրագույն մարմնի կողմից Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի վավերացման մասին

ընդունած որոշումը: Նիստի ավարտին հնչեց Եվրամիության օրհներգը:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԻՆՏԵՆՍԻՎՅԱՆ ԲՈՒՐ ՄԱԿԱՐԳԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԵՅԻՆ «ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱՉԱՆՔԻ» ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԸ

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵՅԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԽ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հուլիսի 12-ին անցկացվեց ինքնակառավարման 8 քաղաքների՝ Թբիլիսիի, Բաթումիի, Ռուսթավիի, Փոթիի, Գորիի, Սցխեթայի, Օզուրգեթիի և Թելավիի քաղաքապետների, ինչպես նաև 13 մունիցիպալիտետների վարչության նախագահների ընտրությունների երկրորդ փուլը:

Ինչպես հայտարարեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիան, տեղական ընտրությունների երկրորդ փուլին մասնակցել է գրանցված ընտրողների 36 տոկոսը, ինչը 5 տոկոսով զիջում է տե-

ղական ընտրությունների առաջին փուլի մասնակիցների թվին: Մասնավորապես, ընտրությունների երկրորդ փուլին Թբիլիսիում մաս-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՏԵՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԱՆՑՆԵՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ

Վրաստանի խորհրդարանի իրավաբանական հարցերի կոմիտեն քննարկում է «Հանրային ծառայության մասին» օրենքի փոփոխությունները: Փոփոխությունների համաձայն, օրենքում ավելացվում է հողված, ըստ որի, որպես ժամանակավոր միջոցառում նախատեսված է մինչև 2015 թվականի հուլիսը տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների հավաստագրման անցկացումը:

Ներկայացված օրինանախագիծը հետապնդում է տեղական ինքնակառավարման համայնի ծառայողների ուսուցման անընդմեջ համակարգի ստեղծման և դրա գործունեության համար իրավական կայուն հիմքերի հաստատման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները որակյալ կադրերով ապահովելու, հավաստագրման միջոցով գործող կադրերի որակավորման գնահատման նպատակ:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՔ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ՎՐԱՍՏԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԷՊՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱՉԵՆ

Հուլիսի 13-ին Թբիլիսիում կայացավ Վրաստանի նախկին նախագահ և ԽՍՀՄ նախկին արտգործնախարար Էդուարդ Շեւարդնաձեի հուղարկավորությունը:

Վրաստանի երկրորդ նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հուղարկավորությանը մասնակցեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, կառավարության անդամներ, պատգամավորներ:

Հուղարկավորությանը մասնակցելու համար Վրաստան էին ժամանել 28 երկրների պաշտոնական պատվիրակություններ: Ռուսաս-

տանից պաշտոնական պատվիրակներ կա չի եղել: ԱՄՆ-ն ներկայացրել է նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյթերը, իսկ Գերմանիան նախկին ԱԳ նախարար Հանս Դիտրիխ Գեյշերը, ով ընդգծել է, որ ժամանել է կանցլեր Անգելա Մերկելի անձնական խնդրանքով:

Էդուարդ Շեւարդնաձեին, ով Վրաստանը ղեկավարել է շուրջ 30 տարի և պաշտոնից հեռացել է

«վարդերի հեղափոխության» արդյունքում, զինվորական պատիվներով հուղարկավորեցին կառավարական նստավայրի բակում, կնոջ կողքին: Վերջին տարիներին նա նստավայրում էր բնակվում: Հուղարկավորության արարողության ժամանակ ընթերցվել է Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի ցավակցական ուղերձը, ով բուժման նպատակով գտնվում է Գերմանիայում և չի կարողացել մասնակցել նախկին նախագահի հուղարկավորությանը:

Ելույթ ունեցողները շեղմունքներ ար-

տահայտվեցին «վերակառուցման» ընթացքում և «սառը պատերազմի» ավարտին՝ համաշխարհային հանրության, ինչպես նաև Վրաստանի առջև՝ քաղաքացիական պատերազմի դադարեցման և 1990-ականների սկզբին քրեական անարխիայի հարթահարման գործում Էդուարդ Շեւարդնաձեի ներդրման մասին:

Բեյթերի խոսքով, Վրաստանն այսօր ազատ չէր լինի, եթե չլիներ Էդուարդ Շեւարդնաձեի և Միխայիլ Գորբաչովը: «Սրանք այն մարդիկ են, ովքեր հրաժարվեցին ուժ գործարկել և եթե այդպես չանեին, «սա-



ասանական ազգային շարժմանը», 3-ը (Շարունակությունը՝ 4-րդ էջում)



ըր պատերազմը» խաղաղությամբ չէր ավարտվի»,- ընդգծել է Բեյթերը: Էդուարդ Շեւարդնաձեի մահացել է հուլիսի 7-ին, 86 տարեկան հասակում:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՍՏԱՌՈՒԹՎԱԳՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ «ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐ» ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ




Հանդիպմանը քննարկվեցին Վրաստանի և ամերիկյան Սան Դիեգո պետական

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գործադիր տնօրեն Դենա Չայդեի հետ:

համալսարանի միջեւ ձեւակերպված համագործակցության հուշագրի շրջանակներում՝ Վրաստանի կառավարության ու Միացյալ Նահանգների կառավարության միջեւ ստորագրված «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի երկրորդ նախագծի հետ առնչվող հարցերը: Վրաստանի կառավարության ղեկավարը կորպորացիայի գործադիր տնօրենին շնորհակալություն հայտնեց այն կապակցությամբ, որ Վրաստանը հայտնվել է այն չորս երկրների թվում, որոնց տրվել է նախագծից օգտվելու իրավասություն: Վերոնշյալ նախագծի շրջանակներում Վրաստանը ստացել է «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիային հատկացված 140 միլիոն դոլարը: Նախագիծն իրականացնում է մարտահրավերի հիմնադրամը, որի դիտորդական խորհուրդը Վրաստանում գլխավորում է վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին:

Նախագծի շրջանակներում Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանը, Վրաստանի տեխնիկական համալսարանը եւ Իլիայի անվան համալսարանում առաջիկա 20 տարիների ընթացքում կանցկացվեն բակալավորիատի ամերիկյան եւ միջազգային ծրագրերի ուսուցում:



ՈՒԿՐԱԻՆԱ ԱՎԻԱՎՈՐԵՏ ԴՈՆԵՑԿԻ ՄԱՐԶՈՒՄ

Ուկրաինայի Դոնեցկի մարզում, ուկրաինա-ռուսաստանյան սահմանից ոչ հեռու վթարի է ենթարկվել մալայզիական Malaysia Airlines ավիաուղիների Boeing 777 օդանավը:

Օդանավը ընթանում էր Ամստերդամ-Կուալա Լումպուր երթուղով, եւ կործանումից առաջ գտնվում էր 10 հազար մետր բարձրության վրա:

Ավիափոխադրողի ճշտված տվյալների համաձայն՝ աղետի հետեւանքով զոհվել են օդանավում գտնվող բոլոր 283 ուղևորները եւ անձնակազմի 15 անդամները: Ինքնաթիռում եղել են Նիդերլանդների 154 քաղաքացիներ, 27 ավստրալացիներ, 23 մալայզիացիներ, 11 ինդոնեզացիներ, 6 բրիտանացիներ, չորսական քաղաքացիներ Գերմանիայից եւ Բելգիայից, երեք ֆիլիպինցիներ եւ մեկ կանադացի: Մնացածների քաղաքացիական պատկանելությունը հայտնի չէ:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հուլիսի 18-ին արտակարգ հանդիպում անցկացրեց Ուկրաինայի իրադրության շուրջ: Նիստում քննարկման գլխավոր թեման հուլիսի 17-ին Ուկրաինայում «Մալայզիայի ավիաուղիներ» ընկերության ինքնաթիռի կործանումն է:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱԹԱՐ ՄՈՍԿՎԱՅԻ ՄԵՏՐՈՅՈՒՄ

Յուլիսի 15-ին Մոսկվայի մետրոյում տեղի ունեցած վթարի հետեւանքով, քսաներկու մարդ է զոհվել, 150-ը՝ տուժել, որոնցից 100-ից ավելին հոսպիտալացվել է:

ՌԴ արտակարգ իրավիճակների նախարարության Մոսկվայի վարչությունում նշել են, որ «Սլավյանսկի բուլվար» եւ «Պարկ Պրեդեդի» կայարանների միջեւ ընկած ուղեմատում լարվածության կտրուկ անկումը հանգեցրել է մետրոյում ազդանշանման համակարգի գործելուն, ինչը եւ էլեկտրագնացքի կտրուկ արգելակման պատճառ է դարձել»:

ԵՎՐԱՍԻՆՈՐԴՐԱՐԱՆ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԲԱՆԱԶԵՎ

Եվրասիորդարանը հուլիսի 17-ի Ստրասբուրգում կայացած լիագումար նիստում ընդունել է Ուկրաինային նվիրված բանաձեւ, որում աջակցություն է հայտնվում Կիեւի կառավարությանը եւ դատարարություն եւ Ռուսաստանի գործողությունները:

Փաստաթղթի հեղինակները ողջունում են վերջերս Եվրամիության եւ Ուկրաինայի միջեւ ասոցիացման եւ ազատ առեւտրի մասին համաձայնագրի մնացած մասի ստորագրումը: Պատգամավորները նաեւ ողջունել են այս փաստաթղթի ժամանակավոր իրագործումն անհապաղ սկսելու Բրյուսելի որոշումը եւ դրա շուտափույթ վավերացման կոչ են արել:

Եվրասիորդարանը պաշտպանել է Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոյի խաղաղ պլանը՝ որպես «իրադրության ապաստան» եւ խաղաղության հաստատման հիմնական շանս»:

ԿՐԹԱՎԱՆ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԿՀՐԱՊԱՐԱԿՎԵՆ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՑ

Վաղը, հուլիսի 20-ից կսկսվի միասնական ազգային քննությունների արդյունքների հրապարակումը:

Հանրագումարելով միասնական ազգային քննությունների 2014 թվականի արդյունքները, քննությունների եւ գնահատման ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին նշեց, որ քննությունները անցան համագիստ ու նորմալ պայմաններում, առանց լուրջ խախտումների: Միմինոշվիլու տեղեկատվությամբ, հուլիսի 20-ից կսկսվի ազգային քննությունների արդյունքների հրապարակումը եւ, առաջին հերթին, կիրառարկվեն ընդհանուր ունակությունների արդյունքները: Միաժամանակ, Մայա Միմինոշվիլին դիմելով դիմորդներին, հիշեցրեց, որ գրանցման գործընթացը շարունակվում է, եւ նրանք կարող են ընտրել ցանկացած բուհն ու ֆակուլտետը: «Յեղ ու ավարտվի բոլոր քննությունների արդյունքների հրապարակումը, դիմորդները կունենան եւս մի քանի օր իրենց ցուցակում փոփոխություններ կատարելու համար, ապա կսկսվի բողոքարկումների գործընթացը եւ, բնականաբար, դիմորդները փոփոխություններ կատարելու հնարավորությունն չեն ունենա», - ընդգծեց Մայա Միմինոշվիլին: Նրա խոսքերով, բողոքարկման դիմումների ընդունման ավարտից հետո կդադարեցվի նաեւ փոփոխությունների կատարման գործընթացը:

Հիշեցնենք, որ Վրաստանում այս տարի միասնական ազգային քննությունները վրաց լեզվի եւ գրականության քննությամբ մեկնարկեցին հունիսի 26-ին եւ ֆիզիկայի ու արվեստի քննությամբ ավարտվեցին հուլիսի 16-ին: Ինչ վերաբերում է վիճակագրությանը, ապա միասնական ազգային քննություններին մասնակցելու համար դիմում էր ներկայացրել ավելի քան 36 հազար դիմորդ: Բացի այդ, համապատասխան քննություններին մասնակցելու համար գրանցվել էր շուրջ 20 հազար մանկավարժ մանկավարժության թեկնածու, 12 հազար մագիստրոսի թեկնածու եւ մոտ 5 հազար գրանտի տոկոսի բարելավման ցանկության հայտնած ուսանող:



Գեյու համար դիմում էր ներկայացրել ավելի քան 36 հազար դիմորդ: Բացի այդ, համապատասխան քննություններին մասնակցելու համար գրանցվել էր շուրջ 20 հազար մանկավարժ մանկավարժության թեկնածու, 12 հազար մագիստրոսի թեկնածու եւ մոտ 5 հազար գրանտի տոկոսի բարելավման ցանկության հայտնած ուսանող:

ԹՄՐԱԲԻՋՆԵՍ

ՎՐԱՍՏԱՆԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԵԼ Է ՄԵԾ ՔԱՆԱԿԻ ՀԵՐՈՒՆԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

Վրաստանի ներքին գործերի նախարարության աշխատակիցները, Ադրբեջանից թուրքիա մեկնող բեռնատարում 2,79տ հեղուկ հերոին են հայտնաբերել:

Ինչպես տեղեկացրել է ՆԳ նախարարության մամուլի ծառայությունը, «աննախադեպ» բնութագրված այդ գործողության ժամանակ ձերբակալվել են Վրաստանի երկու քաղաքացիներ: Դա Վրաստանի տարածքում ձերբակալված թմրանյութի ամենախոշոր խմբաքանակն է: Բեռնատարից 30կգ կշռով հերոինի 90 տակառներ են իջեցվել: Հեղուկի 80 տոկոսը մաքուր հերոին է: Քրեագետները ամբողջ ապրանքի արժեքը գնահատել են հարյուրավոր միլիոն դոլարներ: Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին շնորհավորել է Ներքին գործերի նախարար Ալեքսանդր Ծիկաիծեին եւ նրա գերատեսչությանը՝ թմրանյութերի աննախադեպ խմբաքանակ առգրավելու առնչությամբ: «Ծիկաիծեի գերատեսչությունը թմրանյութերի մեծ քանակություն է առգրավել:

Այդքան մեծ քանակի թմրանյութեր դեռեւս չեն առգրավվել ոչ միայն մեր, այլ նաեւ հարեւան երկրներում», - հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին: Թմրանյութերի ապօրինի փոխադրման փաստով հետաքննություն է սկսվել: Ադրբեջանական «Ազադլըզ» թերթը գրում է, որ Վրաստանում խոշոր չափի թմրանյութի բացահայտումը, որը չի վրիպել միջազգային մամուլի ուշադրությունից, դժվար դրության մեջ է դրել Ադրբեջանի իշխանությանը: «Ադրբեջանի իշխանությունը լրջորեն տագնապած է, քանի որ աշխարհով մեկ հայտարարում է, թե պայքարում է թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ: Այդ դեպքում, ինչպես է ստացվում, որ մոտ 3տ հերոինը հանգիստ կերպով անցկացվել է Ադրբեջանով, եւ իրավապահ մարմինները չեն կարողացել տեսնել այդչափ թմրանյութը: Ադրբեջանի իշխանությունը հարկադրված է պատասխանել այդ հարցերին: Ենթադրվում է, որ վիճակից դուրս գալու համար ադրբեջանական իշխանությունը կարող է «զոհել» որոշ «մանր ձկներ»: Սակայն համոզվիչ չէ, որ դրանով հնարավոր կլինի բողոքել այդ խայտառակ իրադարձությունը, քանի որ բացահայտ է, որ հարցի հետեւում «շնաձկներ» են կանգնած, իսկ նրանց «զոհաբերելը» հավատարի չէ: Որոշ ենթադրությունների համաձայն՝ այդ իրադարձությունը ուղղված է Ադրբեջանի իշխանության մերկացմանը: Դրանով հանդերձները դա բացատրում են այն բանով, որ իրադարձությունն անմիջապես միջազգային մակարդակով հանրայնացվել է: Մյուս կողմից՝ Վրաստանի իշխանությունը ջերմ հարաբերություններ ունի Ադրբեջանի իշխանության հետ, եւ միջադեպը կարող էր հարթվել առանց աղմուկի: Սակայն, երեւում է, գործողությունն իրականացվել է անկախ Վրաստանի իշխանության կամփքից», - եզրակացնում է «Ազադլըզ»-ը:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ՎՐԱՍՏԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԷԴՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱԶԵԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում) **ՀՈՒՐԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԴ ԵՐ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎՈՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ինչպես արդեն հարգորդել ենք, Վրաստանի նախկին նախագահ Էդուարդ Շեւարճյանի հուղարկավորությանը մասնակցեց նաեւ Հայաստանի պաշտոնական պատվիրակությունը՝ Հայաստանի Ազգային ժողովի (ԱԺ) նախագահ Գալուստ Սահակյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին Հայաստանի արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը, ԱԺ տնտեսական հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Վարդան Այվազյանը, ԱԺ

աշխատակազմի ղեկավար Հրայր Թովմասյանը, ԱԺ արտաքին հարաբերությունների վարչության պետ Վիկտոր Բիլյազովը, արարողակարգային վարչության պետ Անդրանիկ Սարգսյանը: Պատվիրակության անդամները, հուղակավորման արարողության ավարտից հետո՝ հուլիսի 14-ին այցելեցին Թբիլիսիի Սուրբ Գեորգ եկեղեցի: Հյուրերին ուղեկցում էր Վրաստանում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Վահագն Աֆյանը: Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վագգեն եպիսկոպոս Միրզախանյանը հյուրերին պատմեց ընթացող վերանորոգչական աշխատանքների մասին: Բարձրաստիճան հյուրերն այցելեցին նաեւ Սուրբ Էջմիածին եկեղեցի: Ազգային ժողովի նախագահը եւ պատվիրակության անդամները ծաղիկներ տեղադրեցին եկեղեցու բակում Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին կանգնեցված խաչքարին: Եկեղեցում մոմեր վառելուց հետո պատվիրակության անդամները հյուրընկալվեցին «Հայարտուն» կրթա-մշակութային երիտասարդական կենտրոնում: Հայաստանի պաշտոնական պատվիրակությունն այցելեց Թբիլիսիի Հայ գրողների եւ հասարակական գործիչների «Խոջիվանքի» պանթոն եւ իր խոնարհումը բերեց պանթոնում հանգչող ազգի զավակների հիշատակին, ծաղիկներ դրեց նրանց տապանաքարերին: Հայաստանի պետական պատվիրակությունը նույն օրը վերադարձավ Երեւան: Լուսանկարը՝ Ա. Սարգսյանի



Ծաբարից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին մասնակցեց բիզնեսի զարգացման խորհրդաժողովին, որի հիմնական թեմաներից մեկը գործարար շրջաններին: «Արտադրված է Վրաստանում» կառավարական ծրագրի մշակմանը նաև ներկայացված էր:

Միջոցառումն անցկացվեց «Էքսպո Զորջիա» ցուցասրահում: Դրան մասնակցեցին Վրաստանում գործող բանկերի, ներդրումային ընկերությունների, միջազգային դոնոր կազմակերպությունների, հիմնադրամների ու պետական տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ: Խորհրդաժողովի շրջանակներում բացվեցին մի շարք ցուցահանդեսներ, որտեղ ներկայացվեցին վրացական ավելի քան 80 ընկերությունների թողարկած արտադրանքը, ինչպես նաև՝ բիզնեսի զարգացման համար վրացական նորամուծու-

թյունների եւ գյուտերի նմուշները:

«Մենք գործարարներին տեղեկատվություն փոխանցեցինք «Արտադրված է Վրաստանում» կառավարական ծրագրի վերաբերյալ: Դրական արձագանքները թույլ են տալիս ենթադրելու, որ մինչև ընթացիկ տարվա վերջը կյուրացվեն այն հնարավորությունները, որոնք ընձեռում է ծրագիրը»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:



ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԴԱՍՆԵԹԱՑՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Յուլիսի 17-ից «Էվեքս» բժշկական կորպորացիան Վրաստանի հինգ տարածաշրջաններում, այն է՝ Իմերեթիում, Սամցխե-Ջավախեթիում, Սամեգրելոյում, Աջարիայում եւ Կախեթիում բացում է գյուղական բժշկների ընդհանուր թեքման տեխնիկական նրբությունների որակավորման բարձրացման դասընթացներ: Վարժաընթացը կանցկացվեն վերոնշյալ տարածաշրջանների 900 գյուղական բժշկների եւ բուժքույրերի համար:



ԵՐԳՆԵՔԻ «ԲԱԶՐՈՒԲԱՆ», ՈՐՊԵՍ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՊԵՏՔ Է ՊԱՅՊԱՆԵԼ

Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաստա Զաքարիաշվիլու հայտարարությամբ, Երգնեքի «բազրոբան», որպես հնարավորություն, պետք է պահպանել, թեպետ այն հնարավոր է կազմակերպել այն վայրում:

«Երգնեքի «բազրոբան» ժամանակին հիմնվեց, ելնելով հենց այդ ժամանակի պահանջներից: Մենք Երգնեքի «բազրոբան», որպես հնարավորություն, պետք է պահպանենք, թեպետ այն, թե որտեղ է բացվելու եւ ինչ ձեւաչափով, պետք է պարզեն փորձա-

գետները, քանի որ այդ բազրոբանի գործունեությունը բավականին արդյունավետ էր: Հետեւաբար, հիմա էլ «բազրոբան» պետք է բացվի այնտեղ, որտեղ նա արդյունավետորեն կգործի»,- ասաց Պաստա Զաքարիաշվիլին եւ հավելեց, որ Երգնեքի բազ-

րոբանի բացման հարցի քննարկման համար քաղաքական ցանկությունը առկա է:

Նրա խոսքերով, «բազրոբան» բացումը չի հակասում Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրին: «Ասոցիացման համաձայնագիրը մեզանից պահանջում է սերտ կապեր բռնագավթված տարածքներում ապրող բնակիչների հետ: Հարցը քննարկման փուլում է: Տեսնենք, թե որքանով այն նպատակահարմար կլինի: Որոշումը դեռևս չի ընդունվել, բնականաբար, դրա իրականացման մասին խոսելը վաղաժամ է»,- հայտարարեց Պաստա Զաքարիաշվիլին:

ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է 305 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ ԵՆՏՐՈՒՄ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարար Էլզուրա Խոկիշվիլին ներկայացրեց 2014 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունը:

Նախարարի խոսքերով, ներդրումները հիմնականում իրականացվել են ջրամատակարարման, ինչպես նաև պտղամրգիլային ճանապարհների ու շինարարության ոլորտներում:

«Երկրի մասշտաբով ջրամատակարարման համակարգում իրականացվել է 23 միլիոն լարիի ներդրում, ավտոմոբիլային ճանապարհների ոլորտում՝ 215, իսկ շինարարության ոլորտում՝

61 միլիոն լարիի ներդրում: Մյուս ոլորտներում հանրագումարային ներդրման գումարը կազմել է 6 միլիոն լարի: Տարվա առաջին կեսին նախարարությունը ձեռնամուխ է եղել 209 նախագծերի իրականացմանը, 302-ը իրականացման փուլում են, իսկ 14-ն արդեն ավարտվել է»,- հայտարարեց Խոկիշվիլին:



ՀԱՅՏԱՐԱՐԿԵԼ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ

Իշխանությունները ներդրողներին եւս մեկ զիջում են կատարում եւ առաջարկում են տնտեսական համայնքում:

«Ներդրումային միջավայրի բարելավման եւ ներդրումների աջակցության նպատակով, Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունն ու «Պետական գույքի ազգային գործակալության» նախաձեռնությամբ փոփոխություններ են կատարվել

«Պետական գույքի մասին» օրենքում: Սկսած 2012 թվականից մինչ օրս, պետությունը ներդրողներին ներել է ավելի քան 10 միլիոն լարիի ու 347 միլիոն դոլարի պարտքերը: «Պետական գույքի ազգային գործակալության» տվյալներով, ներդրող-

ներին ներվել է մինչև 2014 թվականի հունվարը պայմանագրերով ստանձնած պարտավորությունների ստանձնման վերաբերյալ տեղեկատվության չներկայացման համար սահմանված տույժը: Ներվել է նաև փոխանցված գույքի սպահովագրության պարտավորության չկատարման կամ կոնունակ հարկերի վճարումների չիրականացման համար սահմանված տույժը:

ԱՆՅՎԱՅՎԵՅՆ ՆՈՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԸՆՈՐԶԱՆԳԵՐ

Թբիլիսիում անցկացվեց արտոնյալ ազդակների նախագծի շրջանակներում 74 նոր արտադրությունների ֆինանսավորման շնորհանդեսը:

Նախագծի շրջանակներում, Վրաստանի տարածաշրջաններում ֆինանսավորվեց 74 նոր եւ ավելի քան 500 գործող ար-

տադրություն: Նախագծի իրացման գործընթացում ստեղծվել են նոր աշխատատեղեր: Նախագծի շնորհիվ ֆինանսավոր-

վել են գյուղատնտեսության ավելի քան 30 ոլորտներ:

Հաշվի առնելով նոր արտադրությունների ֆինանսավորման նկատմամբ հասարակական շահագրգռվածության աճը, գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալության

տնօրեն Գիորգի Չխեիձեն եւ նախագծի մեներգեր Իրակլի Մոխոսոբաֆիշվիլին ֆինանսական ինստիտուտների, կառավարական եւ ոչ կառավարական հատվածների ներկայացուցիչներին ծանոթացրին նոր արտադրությունների կազմավորման ծրագրերին:

ԻՐԱԿԱՎԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ

Վրաստանի կառավարությունը դատական համակարգի բարեփոխման երկրորդ փուլի շրջանակներում մշակել է «Ընդհանուր դատարանի մասին» եւ «Վրաստանի ընդհանուր դատարանի դատավորների կարգապահական պատասխանատվության եւ կարգապահական դատավորության մասին» օրենքներում փոփոխությունների կատարման օրինանախագիծը:

Վրաստանի արդարադատության նախարարության տեղեկատվությամբ, այդ օրինանախագիծերը քննարկվել են արդարադատության փոխնախարար Ալեքսանդր Բարամիձեի եւ Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցիչների հետ Թբիլիսիում կայացած հանդիպմանը:

Ալեքսանդր Բարամիձեի պարզաբանմամբ, օրինանախագիծը նախատեսում է դատավորներին ազատել դատական իշխանությունների կողմից ճնշումից, ապահովել քաղաքացիների համար բողոքարկման դատարանի առավել մատչելիություն եւ այդ նպատակով առավել ազատական եւ հասարակ պայմանների ստեղծում: Այդ նպատակով, բոլոր թեկնածուները դատավորի պաշտոնում կնշանակվեն մրցույթի հիման վրա, առավել հստակորեն կձեւակերպվեն դատավորների գործունեությունում չմիջամտելու երաշխիքները, դատավորներն իրենք են ընտրելու համապատասխան դատարանի նախագահին, իսկ նախագահն իր հերթին, զրկվում է կոնկրետ դատավորի դեմ կարգապահական պատասխանատվու-

թյուն հարուցելու իրավունքից: Այդ իրավասությունը վերապահվելու է արդարադատության գերագույն խորհրդին: Բացի այդ, ներդրվելու է գործերի ավտոմատ բաշխման սկզբունքը: Կկարգավորվի դատավորների գործուղման կարգը, առավել կկատարելագործվեն կարգապահական դատավորության ընթացակարգերը:

Նախարարության կողմից մշակված օրինանախագիծը մի քանի ամիս առաջ առաքվել է Վենետիկի հանձնաժողովի եւ հանձնաժողովի փորձագետների Թբիլիսի կատարած ներկայիս այցն առնչվում է օրինանախագծի հեղինակների հետ դրանց քննարկմանը: Վենետիկի հանձնաժողովի կողմից դիտողությունները ներկայացնելուց հետո օրինանախագիծը կվերամշակվի եւ կներկայացվի կառավարությանն ու խորհրդարանին:



ԱՐԽԱԶԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԶՈՐՍ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Արխագիայի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը այսպես կոչված նախագահական ընտրություններին գրանցել է չորս թեկնածու՝ Ասլան Բժանիային, Լեոնիդ Զաքարային, Ռաուլ Հաջիմբային եւ Սիրաբ Կիշմարիային:

Մերժվել է Արխագիայի նախկին վարչապետ Բեալան Էշբայի դիմումը՝ լեզվաբանական հանձնաժողովի քննության հիման վրա:

Արխագիայում արտահերթ նախագահական ընտրությունները տեղի կունենան օգոստոսի 24-ին:

ԵՐՈՍԻ ԿԻՃՄԱՐԻՇՎԻԼԻՆ ԳՏՆՎԵԼ Է ՄՊԱՆՎԱԾ

Յուլիսի 16-ին, Թբիլիսիում, Դիվիզիոնի փողոցում ավտոմեքենայի մեջ հայտնվաբերվել է հրազենից սպանված «Ռուսթավի-2» հեռուստաընկերության նախկին ղեկավար, Ռուսաստանում Վրաստանի նախկին դեսպան, հունիսի 15-ին տեղական ընտրություններին Ռուսթավիի քաղաքապետի թեկնածու Էրոսի Կիճմարիշվիլին:

Ինչպես տեղեկացրել է ԵՊ նախարարությունը, մարմինը հայտնվաբերվել է մեքենայում, որտեղ գտել են նաև հրազենը: Հետաքննությունը տարվում է երկու՝ ինքնասպանության եւ սպանության վարկածներով:

ՄԱՐԿԱՄԱՆԸ ԹԱՔՎՈՒՄ ԵՐ ԱՆՏԱՌՈՒՄ

Սամցխե-Ջավախեթիի ԵՊ երկրամասային վարչության աշխատակիցները ձեռքավալել են սպանության մեջ կասկածելի, 1983 թվականին ծնված Քենադի Ի.-ին:

Հետաքննության տվյալներով, հուլիսի 10-ին Քենադի Ի.-ն Ախալքալաքի մունիցիպալիտետի Գոգաշեն գյուղում, վրեժխնդրության հողի վրա հրազենի հինգ կրակոցով մահացու վերջ է հասցրել Ախալքալաքի բնակիչ Մելանի Կ.-ին ու նրա թոռան Կատերինա Ս.-ին:

Նշենք, որ մի քանի տարի առաջ Քենադի Ի.-ն սպառնում էր սպանվածի դստերը, որը հրաժարվել էր նրա հետ ամուսնանալ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՐ ՄԱԿԱՐԳԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԵՅԻՆ «ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱՉԱՆՔԻ» ԵՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նակցել է ընտրողների 34,3 տոկոսը, առաջին փուլի 37 տոկոսի դիմաց:

Տեղական ինքնակառավարման մարմինների երկրորդ փուլի ընտրությունների արդյունքներով, ինքնակառավարման բոլոր միավորումներում հաղթել են կառավարող «Վրացական երազանք» կոալիցիայի ներկայացուցիչները: Այսպես, ընտրությունների արդյունքում, Թբիլիսիի քաղաքապետ է ընտրվել Դավիթ Նարմանիան:

Այսպիսով, 2012 թվականի հոկտեմբերի 1-ին խորհրդարանական ընտրություններով մեկնարկած իշխան

նափոխությունը լրիվությամբ ավարտվեց տեղական ինքնակառավարման ընտրությունների ընթացքում: Ներկա դրությամբ, Վրաստանի կառավարող կուսակցությունը ներկայացված է հանձինս երկրի նախագահի, խորհրդարանի մեծամասնության եւ տեղական ինքնակառավարման քաղաքների եւ մունիցիպալիտետների ղեկավարների:

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին տեղական ինքնակառավարման ընտրությունների երկրորդ փուլի արդյունքները համրագումարելիս, այն պատմական ամվանեց: Նա Վրաստանի բնակչությանը շնորհավորեց «Ազատ ու թափանցիկ» ընտրությունների խաղաղ միջավայրում անցկացման համար:

ԵՐԿՐՈՒՄ ՍՈՒՆԻՑԻՊԱԼԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԵՎԱՎՈՐՎԵՑԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

(6 տոկոս) «Նինո Բուրջանաձե-միասնական ընդդիմությունը» 2-ը (4 տոկոս) «Վրաստանի հայրենասերների ալյանսին», իսկ 1-ը բաժին է ընկել անկախ մեծամասնական պատգամավոր Ալեկո Էլիաշվիլուն:

Ընդհանուր առմամբ, ընտրություններին 4 տոկոսանոց արգելափակում հաղթահարել են «Վրացական երազանքը» (45,98 տոկոս), «Միասնական ազգային շարժումը» (26,13 տոկոս), «Նինո Բուրջանաձե-միասնական ընդդիմությունը» (10,35 տոկոս) եւ «Վրաստանի հայրենասերների ալյանսը» (6,37 տոկոս):

Անդրանիկ միստուն կողմ 37, դեմ 8 ձայներով սակրեբուլոյի նախագահ ընտրվեց «Երազանքի» ներկայացուցիչ 55-ամյա Գիորգի Ալիբեգաշվիլին, իսկ տեղակալի պաշտոնում հաստատվեց Գիորգի Տղեմալաձեի թեկնածուները:

Սակրեբուլոյի նոր նախագահը ծնվել է Թբիլիսիում, ավարտել Թբիլիսիի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1988-2006 թվականներին որպես կրտսեր խմբագիր աշխատել է պետական համալսարանի իրատարակչությունում: 1991-92 թվականներին եղել է Թբիլիսիի Սուլխան-Սաբա Օրբելիանու անվան մանկավարժական համալսարանի պրոռեկտոր, 1994-95 թվականներին՝ Թբիլիսիի քաղաքապետարանի կրթության վարչության պետ: 1997-2005 թվականներին՝ Թբիլիսիի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ղեկավար տեղակալ, 2004-2005 թվականներին՝ նույն ֆակուլտետի ղեկավար: 2005-2006 թվականներին զբաղեցրել է համալսարանի հումանիտար ֆակուլտետի ղեկավար տեղակալի պաշտոնը, իսկ 2009 թվականից մինչ օրս աշխատում է Վրաստանի Պատրիարքության Սուրբ Անդրիաս Առաքյալի անվան վրացական համալսարանում:



ՀԱՄԼԵՏ ՍՈՎԻՍՅԱՆԸ՝ ԱՆԱԼՔԱԼՔԻԻ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅԻ ՆԱԽԱԳԱՐ



Ինչպես արդեն հաղորդել ենք, տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքներով, Ախալքալաքի մունիցիպալիտետի վարչության նախագահ էր ընտրվել Էդուարդ Աղասարյանը:

Հունիսի 15-ին անցկացվեց Ախալքալաքի մունիցիպալիտետի նորընտիր սակրեբուլոյի անդրանիկ միստուր: Պատգամավորները նորընտիր օրենսդիր մարմնի նախագահ ընտրեցին «Վրացական երազանքի» ներկայացուցիչ Համլետ Սովսիսյանին, տեղակալ՝ Նաիրի Իրիցյանին:

Իսկ ինչ վերաբերում է Ախալքալաքի մունիցիպալիտետի նորընտիր սակրեբուլոյին, ապա այն կազմված է 37 պատգամավորից, որից 15-ն ընտրվել են համամասնական, իսկ 22-ը՝ մեծամասնական ընտրակարգով: Համամասնական ընտրակարգով պատգամավորական 8 մանդատ բաժին է ընկել կառավարող կոալիցիայի ներկայացուցիչներին, 4-ը՝ «Ոչ խորհրդարանական ընդդիմություն», մեկական՝ «Վրաստանի վետերանների շարժման», «Նինո Բուրջանաձե-միասնական ընդդիմության», «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչներին: Համամասնական ընտրակարգով սակրեբուլոյի անդամներ են դարձել «Վրացական երազանքի» թեկնածուներ Սերգո Լազգյանը, Համլետ Սովսիսյանը, Պարզե Յորդանյանը, Սերուժան Եղոյանը, Ստեփան Հակոբյանը, Արմենակ Փոլոթյանը, Ադամ Զարմարյանը եւ Սարտին Գաբրիելյանը: Ընդդիմության վերոնշյալ կուսակցություններից պատգամավորական մանդատ ստացան Սկրտիչ Մոլոտայանը, Շիրվան Շիրվանյանը, Մելքոն Մարգարյանը, Գրիգոր Մնացականյանը, Ռուբեն Աբաջյանը, Զաքար Զաքարյանը եւ Հարություն Ալեքսանյանը:

Մեծամասնական ընտրակարգով սակրեբուլոյի անդամ են ընտրվել «Վրացական երազանքի» ներկայացուցիչներ Նաիրի Իրիցյանը, Գրիգոր Օրոմոտյանը, Մամվե Սաղաթեյանը, Սլավիկ Մարաբյանը, Ժորա Եղոյանը, Ֆեռոդ Թորոսյանը, Ավետիք Ապոստոլ, Սարգիս Ուզունյանը, Արամ Կարապետյանը, Խվիչա Մալաձե, Արարատ Զարչյանը, Աշոտ Սարինյանը, Վաղարշակ Առաքելյանը, Էդուարդ Ելյազյանը, Զատուր Պաքսաձե, Հրայր Մովսիսյանը, Վիտալի Թորոսյանը եւ Յագոր Դազարյանը:

Համամասնական ընտրակարգով պատգամավորի մանդատներ ստացան «Երազանքի» 11, «Միասնական ազգային շարժման» 2 եւ մեկական «Վետերանների շարժման» եւ «Ինքնակառավարումը մարդկանց» ներկայացուցիչները: Մեծամասնական ընտրակարգով սակրեբուլոյի անդամներ դարձան «Երազանքի» 8, «Ոչ խորհրդարանական ընդդիմության» մեկ ներկայացուցիչ եւ մեկ անկախ պատգամավոր:

Համամասնական ընտրակարգով պատգամավոր դարձան «Երազանքի» ներկայացուցիչներ Սմբատ Կյուրեղյանը, Հովհաննես Մոլոտայանը, Կոնստանտին Վարդանյանը, Սամվել Մոտոյանը, Սամվել Իրիցյանը, Զոհի Բե-

րիձեն, Անիվարդ Մոտոյանը, Նաիրի Մանուկյանը, Մամվել Աբգարյանը, Ոսկան Էլոյանը եւ Գրիգոր Շամիսյանը: Այդ ընտրակարգով պատգամավորի մանդատ ստացան նաեւ վետերանների շարժման թեկնածու Թամազ Ցխվիլաձե, «Միասնական ազգային շարժումից» Վաչագան Պողոթյանը եւ Վարազդատ Արզումանյանը, «Ինքնակառավարումը մարդկանց» միավորումից Մեխակ Սիմոնյանը:

Ինչ վերաբերում է մեծամասնական ընտրակարգով պատգամավորների ընտրությանը, ապա «Վրացական երազանքը» ներկայացնում են Գրիգոր Միսիթարյանը, Կարեն Մարգարյանը, Աբրահամ Մարկոսյանը, Սեդրակ Շահբազյանը, Սամվել Դարբինյանը, Անդրանիկ Խաչատրյանը, Գրիգոր Զապանյանը եւ Անդրանիկ Կարապետյանը: Համաձինս Վաղարշակ Արզումանյանի, սակրեբուլոյում ներկայացված է ոչ խորհրդարանական ընդդիմությունը: Եվս մեկ մանդատ բաժին է ընկել անկախ պատգամավոր Վալերիկ Բեգոյանին:



Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ԻՐԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՒՆԱՆՈՒՄԵՎԻԻ «ԻՆՉՈՒ ՍՐՄԵՆ ՄԱՐԱՆԳՈՉՅԱՆԻՆ ԹՈՒՅԼ ԳՏՎԵՅԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԻՐ ՍՈՒՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ»

Հունիսի 15-ին Վրաստանի ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլին Վրաստանի խորհրդարանի մարդու իրավունքների կոմիտեում հանդես եկավ իրավապահ մարմինների կողմից օմբուդսմենի գործունեության արգելակման փաստի վերաբերյալ հայտարարությամբ:



Խոսքը վերաբերում է Ախալքալաքիում տեղի ունեցած իրադարձությանը: Նանուաշվիլու խոսքերով, ժողովրդական պաշտպանի ներկայացուցիչ Արմեն Մարանգոյանին թույլ չեն տվել մուտք գործել Ախալքալաքիի նախնական կալանքի մեկուսարան:

Օմբուդսմենի պնդմամբ, ընթացիկ տարվա հունիսի 11-ին, ժամը 22-ին, ժողովրդական պաշտպանի տարածաշրջանային լիազոր Արմեն Մարանգոյանը եկել է Ախալքալաքիի ոստիկանության բաժանմունք, որտեղ գտնվում էին վկայի կարգավիճակով հարցաքննության ներկայացած քաղաքացի Մ.Ի.՝ ի հարազատները: Օմբուդսմենի հավաստմամբ, լիազորի հետ հանդիպմանը, Ախալքալաքիի ոստիկանության բաժանմունքի պետի տեղակալ Թեմուր Սիսիրտաձեն հայտարարել է, որ վարչական կարգով ձերբակալված Մ.Ի.-ին այդ ժամանակ արդեն տեղափոխել են Ախալցխիսեի ոստիկանության ժամանակավոր մեկուսարան: Թեպետ սույն տեղեկատվությունը Ախալցխիսեի ոստիկանության բաժանմունքում չհաստատեցին: Օմբուդսմենի լիազորը վերադառնալով Ախալքալաքիի բաժանմունք, կրկնել է ձերբակալվածի հետ հանդիպելու փորձը, թեպետ՝ ապարդյուն:

Ինչպես հայտարարեց Ուչա Նանուաշվիլին. «Ժողովրդական պաշտպանի լիազորը վերադարձել է Ախալքալաքիի ոստիկանության բաժանմունք եւ պահանջել է համապատասխան իրավասության հիման վրա ժամանակավոր մեկուսարան մուտք գործելու թույլտվություն: Ոստիկանության հերթապահ աշխատակից Արթուր Հարությունյանը մերժել է նրան եւ լիազորից պահանջել թողնել ոստիկանության տարածքը, քանի որ միեւնույն է, նրան թույլ չի տա հանդիպելու ժամանակավոր մեկուսարանում գտնվող ձերբակալվածի հետ: Դա կտուհաններին հռչակագրի ֆակուլտատիվ արձանագրությանը նախատեսված, Վրաստանի պետության կողմից ստանձնած պարտավորության անտեսում է», - հայտարարեց Վրաստանի ժողովրդական պաշտպանը:

Մինչևե տալիսի անցկացումը, դեռևս հունիսի 12-ով թվագրված դիմումում, ժողովրդական պաշտպանը ներքին գործերի նախարարությանը կոչ է անում վերոնշյալ փաստի առթիվ կարգապահական հետաքննություն անցկացնել Ախալքալաքիի ոստիկանության բաժանմունքի աշխատակիցների նկատմամբ, ովքեր օմբուդսմենի լիազորին թույլ չեն տվել հանդիպելու ժամանակավոր մեկուսարանում գտնվող անձի հետ:

Թեպետ, մինչևե հունիսի 15-ը նախարարության կողմից վերոնշյալ դիմումը ոչ մի արձագանք չառաջացրեց, իսկ հետո գերատեսչության կողմից տարածված հայտարարության մեջ նշվեց, որ «ժողովրդական պաշտպանի լիազորը ներկայացրեց համապատասխան վկայական եւ մուտք գործեց ոստիկանու-

թյան շենք: Նրա հետ զրուցեց վարչության պետի տեղակալը: Նա պարզաբանեց, որ վերոնշյալ անձը վարչությունում չի գտնվում. որից հետո ժողովրդական ներկայացուցիչի ներկայացուցիչը թողեց ոստիկանության շենքը: Տեղեկատվություն այն մասին, որ ոստիկանության աշխատակիցներն արգելքներ են հարուցել ժողովրդական պաշտպանի ներկայացուցչի աշխատանքին եւ արգելել քաղաքացու հետ հանդիպումը, իրականությանը չի համապատասխանում: ՆԳՆ-ն ակտիվորեն համագործակցում է ժողովրդական պաշտպանի աշխատակցի հետ եւ 2013-2014 թվականների Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները շուրջ 140 անգամ եղել են ժամանակավոր մեկուսարաններում»:

Հատկանշական է այն հանգամանքը, որ ՆԳ նախարարությունն իր այս հայտարարությանը հաստատում է ժողովրդական պաշտպանի հայտարարության մի դրվագը, թեպետ անտեսում է երկրորդը, որտեղ նշված է, որ օմբուդսմենի ներկայացուցիչը երկրորդ անգամ է ներկայացրել ոստիկանության բաժանմունք եւ հենց այդ ժամանակ է նրան արգելել են մուտք գործել մեկուսարան: Ըստ երեսույթին, գործել է «ինքնապահովագրման սինդրոմը»:

Նշենք, որ վերոնշյալ միջադեպը ՆԳ նախարարության ու ժողովրդական պաշտպանի գրասենյակի միջեւ առաջին հակադրությունը չէ: Նման փաստեր տեղի են ունեցել նաեւ մինչ այդ եւ տարբեր տարածաշրջաններում, թեպետ ոչ մի փաստի առթիվ իրավապահ մարմինների ներկայացուցիչներին նկատմամբ կարգապահական ոչ մի պատժամիջոց չի կիրարկվել:

Վերոնշյալ հանգամանքը լուրջ մտահոգության առիթ է տալիս: Ինչպես նշեց մարդու իրավունքների կենտրոնի ղեկավար Ալեկո Ցեխտիշվիլին, դա իրավապահ մարմինների ներկայացուցիչների մոտ առաջացնում է «անպատժելիության, անենաթույլատրելիության սինդրոմ», ինչը կարող է խթանել ոստիկանների կողմից իրավասությունների շահարկմանը: Հունսով ենք, որ իրավապահ մարմինները եւ սահմանադրությանը վերջիններիս գործունեությունը վերահսկելու իրավասությանը օժտված մարմինները համապատասխան երակայացության կհանգեն, ինչը հուսալի արգելք կդառնան ման շահարկումների դեմ: